# Սփյուռքի խնդիրները լուրջ նախադրյալներ են պահանջում նորաստեղծ նախարարությունից

Հայապահպանության խնդիր, հայերենին հստակ տիրապետելու համար տարվող աշխատանքներ, արեւմտահայերենի պահպանություն եւ մի շարք լուծում պահանջող հարցեր, որոնք նոր կազմավորվող սփյուռքի հարցերի նախարարության առջեւ են դրված:

Երեկ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ սփյուռքահայությանը վերաբերող ժողով- քննարկում, որին մասնակցում էին Հրանուշ Հակոբյանը, ԳԱԱ-ի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, ակադեմիկոսներ ու հայկական սփյուռքի հարցերով զբաղվող ներկայացուցիչներ:

Քննարկմանը ներկա հումանիտար գիտությունների բաժնի ղեկավար Վլադիմիր Բարխուդարյանի կարծիքով՝ հարաբերությունները սփյուռքահայության հետ անտեսվել են: Ըստ Բարխուդարյանի՝ սփյուռքի հարցերի նախարարությունը վաղուց պետք է ստեղծվեր: Նրա մատուցմամբ՝ սփյուռքի բնակչության 80 տոկոսը հայերենին չի տիրապետում:

Արեւելագետ Նիկոլայ Հովհաննիսյանն էլ առաջարկում է ստեղծել համասփյուռքյան կառույց: Սփյուռքում առկա համայնքային մտածելակերպը պետք է հանել, կառույցն էլ չպետք է ունենա կուսակցության ներկայացուցիչ: Նիկոլայ Հովհաննիսյանի ներկայացմամբ՝ սփյուռքն այսօր ավելի շատ օգնության կարիք ունի, քան Հայաստանը՝ սփյուռքից:



Պատմաբան Նորայր Սարգսյանը խոսեց երրորդ սերնդի սփյուռքի մասին, ուր հայերենին ընդհանրապես չեն տիրապետում:

Մտահոգություն հայտնեց պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը: Վերջերս սփյուռքում նա հանդիպում է ունեցել Արամ Ա կաթողիկոսի եւ 10 մտավորականների հետ: Սփյուռքահայ մտավորականները ներկայացրել են հայրենիքի եւ սփյուռքի տարբերությունները: Անհրաժեշտ է ստեղծել համահայկական դասագրքեր, իսկ սփյուռքի հայ մտավորականությունը դժբախտությամբ է ընդունում բյուրեղյա արեւմտահայերենի կորուստը:

ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն էլ խոսացավ ակադեմիայի կողմից նվիրել սփյուռքի հետ կապված իր գրքերը:

Խնդիրներն ու հարցադրումները բավականին շատ էին, իսկ սփյուռքի հարցերի նախարարի պաշտոնը մոտ ապագայում ստանձնող Հրանուշ Հակոբյանը կարեւորեց հայրենասիրության գաղափարը՝ ծանր հարցերից համարելով արեւմտահայերենի խնդիրը: Նա նշեց, որ ստեղծվելու է Ամերիկայի, Եվրոպայի, Մերձավոր Արեւելքի, ԱՊՀ-ի վարչություն, ինչն իր հերթին կնպաստի սփյուռքահայության խնդիրների լուծմանը. «Համաձայն եմ գիտնականների կարծիքին: Չինովնիկների հավաքատեղի չպետք է դառնա կառույցը, չպետք է այս կամ այն գերատեսչության դռներն ընկնենք: Նախարարությունը չի զբաղվելու փող խնդրելու խնդիրներով: Պետք է մտածենք, թե ինչպես օգնենք սփյուռքին»:

Հրանուշ Հակոբյանը ներկաներին խնդրեց նոր հայեցակարգեր, մոտեցումներ ներկայացնել կառույցի ստեղծման վերաբերյալ, ինչպես նաեւ ցանկություն հայտնեց, որ ԵՊՀ-ում սփյուռքահայության նոր ամբիոն բացվի:

**ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ**